

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ
տևողությունը 60 րոպե
11-12-րդ դասարաններ**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Պտերների բեղմնավորումը տեղի է ունենում .

- 1) տերևների վրա
- 2) սպորանգիումներում
- 3) ծաղիկի մեջ
- 4) նախածիլի վրա

2. Միկոզներ կոչվող հիվանդությունների հարուցիչները

- 1) վիրուսներն են
- 2) բակտերիաներն են
- 3) նախակենդանիներն են
- 4) սնկերն են

3. Ո՞ր օրգանիզմը կարող է միաժամանակ կատարել և՛ պրոդուցենտի և՛ կոնսումենտի դեր.

- 1) կանաչ էվգլենան
- 2) հողաթափիկ ինֆուզորիան
- 3) սովորական ամեոբան
- 4) լյարդի լյամբլիան

4. Արյան շրջանառության քանի՞ շրջան ունեն երկկենցաղները.

- 1) թրթուրը՝ մեկ, իսկ հասուն կենդանին՝ երկու
- 2) թրթուրը չունի արյան շրջանառություն, իսկ հասուն կենդանին ունի մեկ շրջան
- 3) թրթուրը՝ երկու, հասուն կենդանին՝ երեք
- 4) և՛ թրթուրը, և՛ հասուն կենդանին ունեն երկու շրջան

5. Մարդու արյան բջիջներից ո՞ր բջիջներն են ամենաշատը.

- 1) բազոֆիլները
- 2) էրիթրոցիտները
- 3) լիմֆոցիտները
- 4) թրոմբոցիտները

6. Մարդու արյունը կարելի է տարբերել գորտի արյունից .

- 1) գույնով
- 2) էրիթրոցիտների կառուցվածքով
- 3) լեյկոցիտների առկայությամբ
- 4) պլազմայի սպիտակուցների առկայությամբ

7. Ճանճի արյունը չի իրականացնում.

- 1) թթվածնի տեղափոխում
- 2) գլյուկոզի տեղափոխում
- 3) միզաթթվի տեղափոխում
- 4) ամինաթթուների տեղափոխում

8. Կլոնավորման արդյունքում ստացված օրգանիզմը ունենում է.

- 1) նոր գենոտիպ
- 2) նոր ֆենոտիպ
- 3) ելակետային գենոտիպ
- 4) նոր գենոտիպ և ֆենոտիպ

9. Ինչ՞ի պակաս են զգում մարդու մարմնի հյուսվածքները սակավարյունության դեպքում.

- 1) թթվածնի
- 2) սննդարար նյութերի
- 3) ջրի և հանքային աղերի
- 4) բոլոր թվարկած նյութերի

10. Սար բարձրանալիս ուժերն արագ համալրելու համար նպատակահարմար է ուտել.

- 1) մի կտոր շաքար
- 2) մի քիչ ճարպ
- 3) խորոված
- 4) պանիր

11. Սպիտակուցի սինթեզը տեղի չի ունենում .

- 1) միտոքոնդրիումների մատրիքսում
- 2) ցիտոպլազմայում
- 3) ռիբոսոմների վրա
- 4) Գոլջիի ապարատի բջիջներում

12. Երբ գրիպով հիվանդի ջերմությունը բարձրանում է մինչև 38,5°, նրա ֆերմենտները, մասնակցելով քիմիական ռեակցիաների,

1. արագացնում են ռեակցիաները, բայց իրենք փոփոխության չեն ենթարկվում
2. արագացնում են ռեակցիաները և ենթարկվում են փոփոխության ռեակցիայի արդյունքում
3. դանդաղեցնում են ռեակցիաները, բայց իրենք չեն ենթարկվում փոփոխության ռեակցիայի արդյունքում
4. դանդաղեցնում են ռեակցիաները և ենթարկվում են փոփոխության ռեակցիայի արդյունքում

13. Խոտի ցուպիկ (*Bacillus subtilis*) բակտերիաների կուլտուրա աճեցնելու համար խոտի թուրմը սկզբում եռացնում են 20-30 րոպե, որպեսզի

1. սպանեն բոլոր բակտերիաները, բացի խոտի ցուպիկից
2. բակտերիաները ավելի ակտիվ բազմանան
3. խոտի ցուպիկը սպորներ առաջացնի
4. բարձրացնեն խոտի ցուպիկի կենսունակությունը

14. Գենետիկական կոդի էվոյուցիոն նշանակությունն այն է, որ կոդը

1. տրիպլետ է
2. համընդհանուր է (ունիվերսալ է)
3. անհատական է
4. այլասերված է

15. Հորմոններին է դասվում.

1. պեպսինը
2. ամիլազը
3. հեմոգլոբինը
4. ինսուլինը

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ նոր շղթա է սինթեզվում ԴՆԹ-ի մեկ մոլեկուլի կրկնապատկման ժամանակ :

17. Քանի՞ քրոմատիդ կա միտոզի մետաֆազում տեսանելի 8 քրոմոսոմներում:

18. Քանի՞ քրոմոսոմ կպարունակեն դրոզոֆիլա պտղաճանճի չորրորդ սերնդի էպիդեմիսի բջիջները, եթե արուի այդ բջիջներում 8 քրոմոսոմ է:

19. Համաձայն էկոլոգիկական բուրգի կանոնի՝ քանի՞ անգամ է նվազում յուրաքանչյուր հաջորդ տրոֆիկական մակարդակի կենսազանգվածը:

20. Եթե սպիտակուցները կառուցվեին 14 ամինաթթվով, ապա 1 ամինաթթուն առնվազն քանի՞ նուկլեոտիդով կարող էր կոդավորվել: